

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Ե.Ամիրխանյան - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի տեղակալ՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով (Հանձնաժողովի նախագահ)
- Կ.Մանվելյան - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համալիր վերլուծության և կորպորատիվ ծրագրերի բաժնի պետ (համաձայնությամբ)
- Է.Սանթրոսյան - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի ուսումնական աշխատանքների գծով պատասխանատու (հիմնական և ավագ դպրոցների սովորողների մրցույթի դեպքում)
- Ա.Ալեքսանյան - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի ուսումնական աշխատանքների գծով պատասխանատու (տարրական դպրոցի սովորողների մրցույթի դեպքում)
- Համապատասխան դասղեկ - հիմնական և ավագ դպրոցների սովորողների մրցույթի դեպքում
- Համապատասխան դասվար - տարրական դպրոցի սովորողների մրցույթի դեպքում

ԿԱՐԳ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հանրակրթական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) սովորողներին Դպրոցի կրթաթոշակի տրամադրման մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ, որի նպատակն է խրախուսել Դպրոցի սովորողների առաջադիմությունը և խթանել նրանց մտավոր, ֆիզիկական և հոգևոր ակտիվությունը, ինչպես նաև ցուցաբերել աջակցություն՝ գալիք ուսումնական տարվա ուսման վարձի փոխհատուցման նպատակով:

3. Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդ ուսումնական տարվա սկիզբը:

4. Սույն կարգը հաստատվում է, դրանում փոփոխություններ և լրացումներ են կատարվում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հրամանով:

II. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մրցույթը կազմակերպում և անցկացնում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հրամանով ձևավորված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

6. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատակազմի և «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի համապատասխան աշխատողներ:

7. Հանձնաժողովի գործունեության կարգը (աշխատակարգը) հաստատվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հրամանով:

III. «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8. Մրցույթին կարող են մասնակցել Դպրոցի 3-11-րդ դասարանները ավարտած բոլոր այն սովորողները, ովքեր ամբողջ ուսումնական տարվա ընթացքում հանդիսացել են Դպրոցի սովորող, մասնակցել են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կրթաթոշակի տրամադրման մրցույթին ու չեն ճանաչվել հաղթող, ինչպես նաև չեն ստացել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2020 թվականի օգոստոսի 31-ի N 63 հրամանով հաստատված կարգի 13-րդ կետում նշված կրթաթոշակը, սակայն ուսումնական տարվա ընթացքում ունեցել են կրթության, սպորտի կամ արվեստի բնագավառներում ակնառու հաջողություններ և ձեռքբերումներ, և ունեցել են 9.0 և բարձր միջին գնահատական: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (հայտի ձևը հաստատում է Հանձնաժողովը):

9. Մրցույթի հաղթողների ընտրության փուլերի, հաղթողներին որոշելու գործընթացի իրականացման, Դպրոցի կրթաթոշակի տրամադրման համար ֆինանսական միջոցների հատկացման, ինչպես նաև կրթաթոշակից զրկվելու դեպքերի (այդ թվում՝ գալիք ուսումնական տարվա 1-ին կիսամյակում 9.0-ից ցածր միջին գնահատական ունենալու դեպքի) նկատմամբ կիրառվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2020 թվականի օգոստոսի 31-ի N 63 հրամանով հաստատված՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի սովորողներին «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակի տրամադրման կարգի դրույթները:

10. Մրցույթի հաղթողները կստանան Դպրոցի կրթաթոշակ՝ 250,000 ՀՀ դրամի չափով՝ գալիք ուսումնական տարվա ուսման վարձի փոխհատուցման նպատակով: Կրթաթոշակը կտրամադրվի յուրաքանչյուր կիսամյակից առաջ, երկու հավասար մասերով՝ 125,000-ական ՀՀ դրամի չափով:

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգի նպատակը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) հանրակրթական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) սովորողներին «Գազպրոմ Արմենիա» կրթաթոշակի, ինչպես նաև Դպրոցի կրթաթոշակի տրամադրման նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կանոնակարգումն է, և դրանով սահմանվում են Հանձնաժողովի նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները:

2. Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:

3. Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2020 թվականի օգոստոսի 31-ի N 63 հրամանով և սույն աշխատակարգով:

4. Հանձնաժողովի գործառույթները (լիազորությունները) սահմանված են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2020 թվականի օգոստոսի 31-ի N 63 հրամանով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

6. Հանձնաժողովի նիստերի մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են նիստից առնվազն երեք օր առաջ:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսը:

8. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

Հանձնաժողովի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Հանձնաժողովի անդամը կարող է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը, որը պարտադիր ներառվում է նիստի արձանագրության մեջ:

Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են արձանագրություններով:

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են Հանձնաժողովի կողմից հաստատված օրակարգով: Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը որոշում է Հանձնաժողովի նախագահը:

10. Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին փոխանցվում են նիստի անցկացումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

11. Հանձնաժողովի նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է նիստի արձանագրությունը, որին, անհրաժեշտության դեպքում, կցվում են այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

12. Հանձնաժողովի նիստի որոշումը (արձանագրությունը) ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

13. Հանձնաժողովի նիստերի մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են, իսկ Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը նրանց տրամադրվում են առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

14. Հանձնաժողովի կազմը հաստատվում է Հիմնարկի տնօրենի հրամանով: Հանձնաժողովի անդամի լիազորությունը կարող է դադարեցվել և (կամ) Հանձնաժողովի կազմի փոփոխությունը կարող է իրականացվել ցանկացած ժամանակ՝ Հիմնարկի տնօրենի հրամանով:

15. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնելու առաջարկություններ Հանձնաժողովի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, հայտնելու իր կարծիքը Հանձնաժողովում քննարկվող ցանկացած հարցի և Հանձնաժողովի գործունեության ընթացակարգի վերաբերյալ:

16. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել Հանձնաժողովի նիստերին, պահպանել Հանձնաժողովի աշխատակարգի դրույթները.

2) իր պարտականությունների կատարման ընթացքում գործել բարեխղճորեն:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

17. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է Հանձնաժողովի նիստերը, ստորագրում է Հանձնաժողովի որոշումները (արձանագրությունները).

2) ներկայացնում է Հանձնաժողովը այլ անձանց հետ հարաբերություններում:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

18. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հիմնարկի տնօրենի հրամանով: